8414

Պրոլետարներ բոլոր յերկրներից, միացե՛ք

Ս. Կ. ՇԱԴՈՒՆՑ

5

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՅԿՊՅ
Շ-12

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1934

12 JUL 2013

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք՝

ЗКПЗ
Շ-12
պ

Ս. Կ. ՇԱԴՈՒՆՑ

09 DEC 2008
24 SEP 2008

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համ.Կ(բ)Կ-ին կից կուսակցական վերահսկիչ հանձնաժողովի Ազովսե-վծովյան յերկրամասի լիազորի զեկուցումը «Կարմիր Ափսայ» գործարանի կուսակցական կազմակերպության ժողովում մարտի 25-ին

30/23242-00
1002/30566

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

2598

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1934

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ Գրք. Պետ. Գիտ. Գրադարան
ՀԱՅԿ — СССР
Մ. Ա. Մաշտոցյան անվան

8414

18 SEP 2013

Ответ. по выпуску В. ЦОВЬЯН Техред. О. ТЕР-ДАВЫДОВ

Сдано в набор 17-IV—34 г. Подпи сано в печать 29-IV—34 г
Издание № 696. Об'ем 1,25 печ. листа.
Статформат А6 148x105. Заказ № 2035.
Уполкрайлита № В—490. Тираж 1500.

Типография им. „Стачки 1902 г." АЧКПТ. Ростов на Дону.

1. ՁՏՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

Ընկերներ, մեր կուսակցության XVII հաժագումարը վորոշեց կուսակցության շարքերի զտումն ավարտել 1934 թվի առաջին կեսում։

Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպությունն իր շարքերի զտման բավականաչափ փորձ ունի։ Յեթե չխոսենք 1929 թվի և նախկին տարիների զտման մասին, ապա 1932-1933 թ. թ. մեր յերկրամասը զտումն անցկացրեց կուլակության կազմակերպած սաբոտաժի շրջանում։ Այդ ժամանակաշրջանում զտվում եր Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպության փոքր մասը։ Կուսակցության կազմակերպության մեծագույն մասը — մինչև 100 հազար կուսակցական անդամներ և թեկնածուներ — զտման չյենթարկվեց։

Զտման պլանը հաստատված է մարտի 23-ին կուսակցության Ցերկրային կոմիտեի կողմից։ Պլանն այսպես է. ապրիլի 10-ից ձեռնամուխ ենք լինում Ռոստովի կուսակցական կազմակերպության զտմանը, ապա ապրիլի 20-ից — ութը խոշորագույն արդյունաբերական ռայոնների՝ Տագանրոգի, Կրասնոդարի, Նովոչերկասկի, Նովոռոսիյսկի, Շախտի, Սուլինի, Տուապսեյի և Ապշերոնի կուսկազմակերպությունների զտմանը։

Այս կազմակերպություններն իրենց շարքերում հաշվում են 64304 կուսանդամներ ու թեկնածուներ, այսինքն՝ յերկու յերրորդականն այն քանակության, որն ամենամոտիկ ապագայում պետք է զտման յենթարկենք։ Արդյունաբերական ռայոնների կուսակցական կազմակերպությունների զտումը պետք է ավարտվի 40—45 որում, որպեսզի նախ՝ Ազով-Սեվծովյան յերկրամասի պրոլետարական կազմակերպությունների փորձը գյուղ փոխադրվի, յերկրորդը՝ որպեսզի քաղաքային կուսկազմակերպություններից որոշ կադրեր փոխադրվեն գյուղի կուսակցության կազմակերպության զտմանը մասնակցելու համար, և յերրորդը՝ որպեսզի Ռոստովի և Ազով-Սեվծովյան արդյունաբերական մյուս ռայոնների կուսակցական կազմակերպություններն ավելի արագությամբ տան զտման հանրագումարը՝ ել ավելի մոբիլիզացիայի յենթարկելու կուսակցական և անկուսակցական մասսաները, մեր կուսակցության XVII համագումարի վորոշումներն ավելի լավ իրագործելու համար։

Ցերկրորդ հերթին, մայիսի 20-ից սկսվելու յե գյուղական կուսակցական կազմակերպությունների զտումն։ Այստեղ մենք հաշվում ենք կուսակցության 27 հազար անդամ և թեկնածու։ Գյուղական կուսակցական կազմակերպությունների զտումը պետք է ավարտվի հուլիսի սկզբին։

Ձեզնից ամեն մեկը կարող է հարց տալ ինքն իրեն. ինչու՞ հենց այս ժամկետներն են սահմանված զտման համար։ Մենք կանգ ենք առել այս ժամկետների վրա նրա համար, որ ապրիլ ամսում արդեն հայտնի կլինեն արդյունաբերական ձեռնարկությունների առաջին յեռամսյակի աշխատանքների հանրագումարները։ Առաջին յեռամսյակի հանրագումարների ցուցանիշները մեզ կտան այն պատկերը, թե կուսակցության անդամներն ու թեկնածուներն ինչպես են իրագործում առաջապահ դերն արդյունաբերության մեջ, ինչպես են մոբիլիզացիա անում իրենց շուրջն անկուսակցական բանվորական մասսաներին՝ արտադրական պլանները կատարելու համար։

Մասնավորապես «Կարմիր Աքսայ»-ի կուսկազմակերպությանն առաջադրվելու յե այսպիսի

հարց. «Ինչո՞ւ դուք տապալում եք տրակտորների նորոգումը. ո՞վ է այս տապալման կոնկրետ մեղավորը, ինչո՞ւ դուք կասեցնում եք վոչ միայն ձեր արտադրական առաջադրանքի կատարումն, այլև ցանքսի տեմպերը, վորն այս տարի սկսվեց սովորականից վաղ, մոտավորապես մի տասն որ առաջ»։

Զտման հանձնաժողովը կդիմի ձեր գործարանի գործիքներ պատրաստող ցեխի բոլշևիկներին և կհարցնի. «Ինչո՞ւ դուք այդպես վատ եք աշխատում, ինչո՞ւ դուք չեք կատարում կուսակցության վորոշումները»։ Այդ հարցն առաջարկվելու է և՝ ուրիշ հետաքրքիր ձեռնարկությունների յուրաքանչյուր բոլշևիկի, կուսակցական յուրաքանչյուր կազմակերպության։ Կուսակցության անդամը զտման ժամանակաշրջանում պետք է հաշիվ տա կուսակցական և անկուսակցական մասսաների առաջ այն մասին, թե ինչպես է կատարում նա կուսակցության վորոշումները կոմունիստի առաջապահ դերի մասին։

Նույնպես և գյուղական կուսակցական կազմակերպություններում։ Մայիսի վերջերին արդեն բոլորովին պարզ կլինի, թե յուրաքանչյուր կուսակցական կազմակերպություն ինչպես է մասնակցել ցանքսի աշխատանքներում։ Կուսակցության XVII համագումարը գյուղի կոմունիստների առաջ դրել է բերքատվության բարձրացման, ցանքսի ժամկետի առավելագույն կրճատման և նրա վորակի առավելագույն բարձրացման խնդիրը։ Զտման հանձնաժողովը պահանջելու է գյուղական կոմունիստներից այս վորոշման կատարումը։ Այժմ արդեն ժամանակն է հարցնելու Մեչոտինսկի, Կուշչովկայի, Նովո-Պոկրովսկի, Կորենովսկի ու մի շարք այլ հետաքրքիր ռայոնների կուսակցական կազմակերպությունների քարտուղարներին — ինչո՞ւ նրանք ցանքսի հենց սկզբից ցանքսի ցածր տեմպեր վերցրին, տեմպեր, վորոնք բոլորովին հակառակ եյին կուսակցության Ազով-Սևծովյան կոմիտեյի վորոշումներին։

Ահա, ընկերներ, ինչո՞ւ յեն սահմանված զտման այս ժամկետները։ Մենք կանգ առանք հենց այս ժամկետների վրա ճրա համար, վորպեսզի յուրաքանչյուր կոմունիստ, ժողով գալիս, իմանա, վոր նա գալիս է հաշիվ տալու կուսակցությանը, հաշիվ տալու անկուսակցական մասսային՝ ցանքսի պլանի ու ձեռնարկության արտադրական պլանի կատարման ուխտատանքի մասին։ Նա պետք է հաշիվ տա կուսակցության յեվ անկուսակցական մասսաների առաջ, թե ի՞նչպես է ըմբռնում նա ներկա մոմենտում կուսակցության առաջ կանգնած խնդիրները, թե վորքան պատրաստ է նա պայքարելու՝ անդադար սոցիալիստական հասարակության կառուց-

մաճ մասին կուսակցության XVII համագումարի վորոշումները կատարելու համար։ Նա պետք է ապացուցի, վոր արժանի է Լենինի մեծ կուսակցության անդամի կոչումը կրելու։

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՋՏՈՒՄԸ — ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ Է

Ընկերներ, աշխարհում վոչ մի կուսակցություն թույլ չի տալիս իրեն զտել իր շարքերը։ Միայն մեր կուսակցությունը — համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը հնարավորություն ունի ժամանակ առ ժամանակ իր շարքերի զտումը կատարելու։

Յեթե վերցնենք բուրժուական յերկրների կոմունիստական կազմակերպությունները, վորոնք գործում են անլեգալ պայմաններում, ապա կտեսնենք, վոր նրանք չեն կարող զտել իրենց շարքերը։ Մեր կուսակցությունը նույնպես չգիտեր զտում՝ ընդհատակյա պայմաններում աշխատած ժամանակ։ Այն ժամանակ զտում չեր ել պահանջվում, վորովհետև ով վոր այն պայմաններում մտնում եր կուսակցություն, առաջուց գիտեր, վոր նա կուսակցություն է մտնում՝ ցարիզմի դեմ պայքարելու համար, բանվոր դասակարգի դատը պաշտպանելու նպատակով։ Նա գիտեր, վոր նրան կարող են և՛ բանտ նստեցնել, և՛ աքսորել, և վոր նրան կյանքից ել կարող են զրկել։ Այն ժամանակներում կուսակցությունն եյին մտնում բանվոր դասակարգին նվիրված, նրա համար մեռնելու պատրաստ ընկերները։ Այնինչ մենք ներկայումս, յերբ մեր կուսակցությունը հանդիսանում է իշխող կուսակցություն, գործում ենք բոլորովին այլ պայմաններում։

Կոմինտերնի յերկրորդ կոնգրեսը դեռ 1920 թվին վորոշեց՝ «Այն բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունները, ուր կոմունիստները իրենց աշխատանքը տանում են լեգալ կերպով, պետք է կատարեն բոլոր կուսակցական կազմակերպությունների անձնակազմի պարբերական զտումը (վերագրանցումը,) վորպեսզի սիստեմատիկաբար մաքրեն կուսակցությունը՝ անխուսափելիորեն նրա շարքերը սողոսկած մանր բուրժվական տարրերից»։

Կոմինտերնի և մեր կուսակցության համագումարների վորոշումների հիման վրա, մենք ներկայումս ձեռնամուխ ենք լինում մեր շարքերի հերթական զտմանը։

Ի՞նչ պայմաններում կարող է զտումը մաքսիմալ (առավելագույն) հաջողություն ունենալ։

Այն պայմաններում, երբ լայնորեն կծավալվի ինքնաքննադատությունը։ Մեր շարքերում ինքնաքննադատության լայնորեն ծավալման պայմանները միայն, ինչպես և անկուսակցական բանվորական մասսաների և, բոլոր ազնիվ աշխատավորների կողմից մեր առանձին ընկերների սխալների ու թերությունների քննադատության շնորհիվ զտումը կարող է դրական հետևանքներ տալ։

Դուք հիշում եք, ընկերներ, թե ինչպիսի սրությամբ է դնում ընկ. Ստալինը ինքնաքննադատության հարցը։ Նա ասում է, որ ինքնաքննադատությունը մեզ հարկավոր է այնպես, ինչպես ոգը, ինչպես ջուրը։ Հունվարի պլենումում նա ընդգծեց, որ ինքնաքննադատությունը մեզ հարկավոր է ներկայումս ավելի, քան երբևէ եղել է, հետևաբար և զտման աշխատանքի հիմնական պայմանը հանդիսանում է լայնորեն ծավալված ինքնաքննադատությունը՝ անկուսակցական լայն մասսաների մասնակցությամբ։

Տրոցկիստներն, աջ ոպորտունիստները քանիցս արտահայտվել են այն մասին, թե զտումը կուսակցության մեծամասնության ձեռքին ֆրակցիոն զենք է հանդիսանում ընդդեմ փոքրամասնության։ Մեր կուսակցության XIII համագումարում ընկ. Ստալինն այսպես պատասխանեց Պրեոբրաժենսկուն. «Ընկ. Պրեոբրաժենսկին համարում է, որ զտումը կուսակցության մեծամասնության զենքն է ոպոզիցիայի դեմ, և ինչպես երևում է, զտման մեթոդներին հավանություն չի տալիս։ Դա — սկզբունքային հարց է. Ընկ. Պրեոբրաժենսկու խոշոր սխալն այն է, որ նա չի հասկանում, թե առանց անկայուն տարրերի պարբերական զտման, կուսակցությունը չի կարող ամրապնդվել»։

Մեր կուսակցությունը, որ միակ և ղեկավարող կուսակցությունն է, չի կարող զտման չյենթարկել իր շարքերը խցկված և ոտար տարրերից ազատվելու համար։ Յեվ կուսակցությունը պատմական յուրաքանչյուր ետապում իր շարքերը յենթարկել է խիստ ստուգման։ Վերջին զտումը կատարվեց 1929 թվին, երբ կուսակցությունը սոցիալիստական ծավալուն հարձակման անցավ ամբողջ ֆրոնտի վրա, երբ նա ձեռնարկեց առաջին հնգամյակի պատմական խնդիրների իրագործմանը։ Ներկա զտումն սկսվեց յերկրորդ հնգամյակի առաջին տարում, երբ կուսակցությունը ձեռնարկեց անդասակարգ սոցիալիստական հասարակարգ կառուցելու ծրագրի իրագործմանը։ Ընկ. Կագանովիչն ասում էր. «Կուսակցության պարբերական զտումն ոտար, անկայուն, մանր բուրժուական տարրերից անհրաժեշտ պայմանն է հանդիսանում՝ կուսակցության

մարտական խնդիրների հաջող իրագործման համար»։

Այդպես է վարվել կուսակցությունն անցյալում, այդպես է վարվում նա այսոր, այդպես էլ վարվելու յե ապագայում։ Կուսակցությունը ղեկավարվելու յե ընկ. Ստալինի ցուցմունքով. «Վերջապես, կուսակցության զտման հարցի լոզունգի մասին։ Ծիծաղելի կլիներ կարծել, թե կարելի յե ամրացնել մեր խորհրդային-տնտեսական, պրոֆմիութենական և կոոպերատիվ կազմակերպությունները, կարելի յե մաքրել նրանց բյուրոկրատիզմի աղտեղությունից՝ առանց լավապես սրելու իրեն՝ կուսակցությունը։ Չի կարող կասկած լինել այն մասին, թե բյուրոկրատիկ տարրերը կենդանի յեն ոչ միայն տնտեսական կոոպերատիվ և պրոֆմիութենական-խորհրդային կազմակերպություններում, այլև իր՝ կուսակցության կազմակերպությունների մեջ։ Եթե կուսակցությունն այս բոլոր կազմակերպությունների ղեկավարող ուժն է հանդիսանում, ապա ուրեմն պարզ է, որ կուսակցության զտումն այն անհրաժեշտ պայմանն է, առանց որին անկարելի յե մինչև վերջը հասցնել բանվոր դասակարգի մյուս բոլոր կազմակերպությունների աշխուժացումը։ Այստեղից էլ կուսակցության զտման լոզունգը»։

III. ԴԵՍԿԵՐԴԵՑԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՑԵՎ ՅԵՐԿՅԵՐԵՍՄԱՆԻՆԵՐԸ ՏԵՂ ՉԳԻՏԻ ՈՒՆԵՆԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հենց նրա համար, որ կուսակցությունը պատմական որոշ ետապներում դիմել է զտման, որ նա կարողացել է անհողդողդ և անշեղ մաքուր պահել իր շարքերը, պայքարել է տրոցկիստների դեմ, աջ և «ձախ» տարրերի դեմ կուսակցության մեջ, — նա հաղթել է։ Մեր կուսակցության հաջողություններն առաջին հնգամյակի կատարման գործում ամենքիդ հայտնի յեն։

Հիմնականում այս հաջողությունները կայանում յեն նրանում, որ «ով ումը» հարցը մեր յերկրում վերջնականապես լուծված է բանվոր դասակարգի ոգտին, որ մեր յերկիրը դարձել է ինդուստրիալ յերկիր, որ կոլխոզային կարգը հաղթել է, որ կառուցվել է սոցիալիզմի հաստատուն հիմքը, որ մեր կուսակցությունը, ընկ. Ստալինի ղեկավարությամբ, յերկու ֆրոնտում պայքար մղելով, դարձավ միասնական, միաձույլ, ամրակազմ ինչպես յերբեք։

Կոլեկտիվացման քաղաքականությունն անցկացնելու հետևանքով կապիտալիզմի արմատները գյուղում արմատախիլ է արված։ Կուլակությունը ջախջախված է, բայց վերջնականապես չի ջարդ-

ված։ Դասակարգային կռիվը շարունակվում է նոր պայմաններում, բոլորովին այլ ձևերով։ Կուլակն իր պայթուցիկ աշխատանքն է տանում ակնապիրությամբ։

Ահա մի որինակ։ Ձայնաղուրկ-կուլա՛կ Տիմոշևը, վոր 1928 թվականին ապակուլակացվել էր, փախչում է Ստալինգրադ, հետո Ռոստով՝ կեղծ աղգանունով, վորպես հասարակ բանվոր մտնում քաղաքային շինարարության մեջ. 1932 թվին խցկվում է Համ Կ(բ)Կ շարքերը և ապա, վորպես զորակոչիկ, անցնում է Կարմիր բանակը։ Նամակ է գրում նա իր ծնողներին. «Առայժմ ապրում եմ վոչինչ, ծառայությունը դժվար չէ, միայն վատ է, վախենում եմ, կիմանան կուլակի վորդի լինելս, և այն ժամանակ կարող են կուսակցությունից դուրս անել, և այնուհետև ամեն բան կորած է (ծիծաղ)։ Հաջողվեց կուսակցության մեջ մտնել։ Բանակից վոր վերադառնամ, կգնամ նորից այնտեղ, ուր ծառայում էի, և վոչ վոք չի իմանա, վոր յես իրավազուրկ եմ։ Թանկագին ծնողներ, խնդրում եմ ձեր ապրուստի մասին վոչինչ մի գրեք, թե չե կգրեք կասկածելի բան, վոր դուք գյուղից փախել եք։ Վոչ վոք մեղավոր չէ, վոր մեզ ապակուլակացրին։ Մեր ճակատագիրը տանջվելն է։ Աղոթեցեք աստծուն (ծիծաղ), վոր չիմանան թե յես կուլակի տղա

յեմ, այն ժամանակ կորած է մեր կյանքը, ինձ դուրս կանեն և՛ կուսակցությունից և՛ բանակից» (ծիծաղ)։

Հետո նա խրատում է, վոր իրեն գրեն, թե նրանք կոլխոզումն են և լավ են ապրում։ Հարցնում է, ինչպես է քեռին։ Քեռին սպիտակներից է, Բուլղարիայում։ «Յես կ՚վերադառնամ, — գրում է նա, — կգնանք Բուլղարիա, քեռու մոտ»։ Նա ափսոսում է ջրարջի մորթուց կարած մուշտակի և մի ինչ վոր այլ բանի մասին, վոր վերցրել—տարել են։ Բայց ասում է, թե կորցրածը հետ կշահի և մի բան էլ ավելին։

Բացատրություններ։ — Նա մեր, Պրոլետարական ռայոնի կազմակերպությունից է։

Եզրակացություն։ Այս գրողը Ռոստովի կուսակցական կազմակերպության կուսանդամ է։ Նա խնդրում է աղոթել աստծուն, վոր չիմանան, թե նա կուլակ է։

Կան և ուրիշ շատ որինակներ։ Ահա, որինակ, Վիշնյակովը։ 1931 թվին նա մտել է Սելմաշ, հատիչների (обрубщик) ձուլման ցեխը։ Նոյեմբերի ին ընդունվում է թեկնածու։ Բանից դուրս է գալիս, վոր կուլակ է և գործարան մտել է կեղծ փաստաթղթերով։ Ի՞նչ են ասում այս փաստերը։ Նրանք ասում են այնմասին, վոր այսպիսիներին թե հանձնարարող և թե կուսակցության շարքերն ընդունող կուսանդամները բավականաչափ ուշադիր չեն,

բավականաչափ արթուն չեն կուսակցության մեջ նոր անդամներ ընդունելու գործում։

Կարելի է մեջ բերել հետևյալ բնորոշ որինակը. Գորյաչիյ Կլյուչում կուսակցությունն ը ընդունվել կուլակ Կալմիկովը, որը զտման ժամանակ չեր հերքում իր սոցիալական դրությունը և հայտարարեց, թե ինքը ցանկություն չի ունեցել կուսակցություն մտնելու, այլ նրան քարշ են տվել կուսակցության մեջ անցնելու։ Կուսակցության մեջ մնալ նա չի ուզում։ Ահա ինչպիսի որինակներ են լինում, յերբ կորչում է դասակարգային զգոնությունը։

Դուք տեսնում եք, որ մեր կուսակցության շարքերում կան առանձին անձեր, որոնք կրպչել են կուսակցությանը։ Ուստի և կուսակցության զտման մասին Համկոմկուսի (բ) ԿԿ-ի որոշման առաջին կետում ուղղակի ասված է, որ կուսակցությունից հեռացվում են «դասակարգայնորեն ոտար ու թշնամի տարրեր, որոնք խաբուսիկ ճանապարհով կուսակցությունն են խրցկվել ու մնում են այնտեղ՝ կուսակցական շարքերը կազմալուծելու համար»։

Դուք գիտեք, որ դասակարգային թշնամին մեր կուսակցությունն է գալիս ոչ թե նրա համար, որ նա «ներաճվում է սոցիալիզմի մեջ», այլ նրա համար, որպեսզի ականափորությամբ

կաղմալուծի մեր արտադրությունը, մեր կոլխոզները։

Համամիութենական կ մունիցիպալ (բոլշևիկների) կուսակցության ԿԿ-ի որոշման յերկրորդ կետում ասված է, որ կուսակցությունից հեռացվում են «յերկյերեսանիները, որոնք կուսակցությանը խաբելով են ապրում, որոնք հրանից ծածկում են իրենց իսկական ձգտումները յեվ, կուսակցությանը «հավատարիմ» մնալու սուտ յերդման հովանու տակ, փորձեր են անում գործով տապալել կուսակցության քաղաքականությունը»։

Յես ձեզ որինակներ բերի այն մասին, թե ինչպես է կուսակցությունն խցկվում անհարազատ տարրը։ Բայց միթե չկան այնպիսի դեպքեր, յերբ ոչ թե անհարազատ, այլ յերբեմն մեզ դասակարգայնորեն մերձավոր մարդիկ, նույնիսկ բանվորների միջից, բանվորական շարքերում արտացոլում են հետամնաց շերտերի ձգտումները և ոգնում են դասակարգային թշնամուն։ Մենք գիտենք մի շարք այսպիսի դեպքեր։ Այդպես պատահեց տրոցկիստների հետ, որոնք խոսքով ընդունում եյին մեր կուսակցության գլխավոր գծի ուղիղ լինելը, խոսքով ընդունում եյին կուսակցության քաղաքականության ուղիղ լինելը, բայց դրա հետ միասին զբոսնում եյին կուսակցության վրա, գանվելով նրա շարքերում։ Մենք

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՄՀ—СССР
им. А. Маркса
Ս. ՄԱՐՔՍԻ

գիտենք «ձախլիկներին», աջերին, նրանց բլոկը։ Գտնվելով մեր կուսակցության շարքերում, նրանք խոսքերով ընդունում էին մեր կուսակցության գլխավոր գիծը, բայց դրա հետ միասին համաձայն չէին այդ գծի հետ, խաբում էին կուսակցությանը։ Կարելի է բերել որինակներ. ահա ձեզ Ալեքսանդր Պետրովիչ Սմիրնովը։ Գտնվելով մեր կուսակցության շարքերում և վարելով պատասխանատու պաշտոններ, մինչև իսկ Համկոմկուսի (բ) ԿԿ-ի քարտուղարի պաշտոնը, նա միաժամանակ խաբում էր կուսակցությանը, թաքցնում էր ու թաքցնում է կուսակցությունից իր աջ հայացքները։ Այսպես էր նաև Լոմինաձեն և ուրիշները։

Բայց մի՞թե այժմ չկան այդպիսիները կուսակցության մեջ։ Ցեվ ահա զտումը պետք է հայտաբերի այդ մարդկանց, յեղնելով այն բանից, վոր իսկապես մեր ամենավտանգավոր թշնամին նա է, վորը, գտնվելով կուսակցության շարքերում, խաբում է կուսակցությանը, նա, վորը կուստոմնը դրպանում մեր թշնամին է հանդիսանում։ Այն մարդը, վորն ընդունակ է յերկյերեսանիություն անել, խաբել կուսակցությանը, թաքցնել կուսակցությունից իր իսկական հայացքները, նա մեր կուսակցության ամենավտանգավոր թշնամին է, և մենք վոչ վոքի թույլ չենք

տա խաբել կուսակցությանը։ «Այն մարդը, վորն ընդունակ է յերկյերեսանիություն անել, վորն ընդունակ է խաբուսիկ միջոցներով թաքցնել կուսակցությունից իր իսկական հայացքները, նա կուսակցությանը դավաճանելու ուղին է բռնում» (Կագանովիչ)։ Մենք այդ մարդկանց կզտենք մեր կուսակցության շարքերից։

IV. ՑԵՐԿԱԹԵ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ-ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆ Է

Առաջիկա զտման ժամանակ բացառիկ կարևոր տեղ է հատկացվելու կուսակցական կարգապահության ամրացման հարցին։ Ցես դեռ բավականաչափ ծանոթ չեմ Ազով-Սեվծովյան յերկրամասի կուսակցական բոլոր կազմակերպություններին, սակայն պետք է ասեմ, վոր յես արդեն իսկ գալիս եմ այն յեզրակացության, վոր կուսակցության կարգապահության իրականացումը մեր գյուղական կուսկազմակերպություններում շատ վատ է։ Բավականաչափ լավ չէ նաև քաղաքի կուսակցական կազմակերպության մեջ։ Կենտրոնական կոմիտեի, Ցերկրկոմի, քաղաքային կուսակցական կոմիտեի վորոշումների հետ շատերն իհարկե համաձայնում են և ծափահարում, բայց

յերբ տեղն է գալիս նրանց իրականացնելու,—չեն իրականացնում, անգիտանում են, պատական չեն համարում իրենց կուսակցության վորոշումները կատարելու։ Դուք պետք է իմանաք, ընկերներ, ընկ. Լենինի խիստուն խոսքերն այդ հարցի մասին։ Նա ասում եր. «Ով վոր մազաչափ իսկ թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե կարգապահությունը (մանավանդ նրա դիկտատուրայի շրջանում), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային՝ ընդդեմ պրոլետարիատին»։ Մենք պետք է աշխատենք, վորպեսզի Լենինի այս խոսքերն իմանան, յուրացնեն մեր կուսակցության բոլոր անդամները, մեր ամբողջ կազմակերպությունը։ Մեզ հարկավոր է, վորպեսզի յուրաքանչյուր վոք հասկանա, վոր նա, ով այսոր խոսքով ընդունում է կուսակցական կազմակերպության վորոշումներն, իսկ գործնականում չի կատարում նրանց, նա ուղղակի ոգնում է դասակարգային թշնամուն։

Ցեսարդեն չեմ խոսում այն մասին, վոր մեր կուսակցության շարքերում կային և, թերևս, այժմ էլ կան մարդիկ, վորոնք կողմակից են ֆրակցիաների, խմբավարումների կազմակերպության մեր կուսակցության մեջ։ Մեր կուսակցությունը յերբեք չի հանդուրժել վոչ ֆրակցիաներ և վոչ խմբավորումներ։ Դուք հիշում եք, վոր այդ պա-

հանջում եյին տրոցկիստները։ Դուք հիշում եք՝ ինչպես աջերը վրդովվում եյին, վոր կուսակցությունը հնարավորություն չի տալիս նրանց վերճաքանչելու այն խնդիրների շուրջը, վորոնց մասին կուսակցությունն արդեն դուրս է բերել իր վորոշումները։ Մենք ներկուսակցական դեմոկրատիայի կողմակից ենք, մենք կուսակցության մեջ հարցերի քննարկման կողմակից ենք, բայց յերբ կա համապատասխան կուսակցական ինստանցիայի վորոշումը, կա Համկոմկուսի (բ) ԿԿ-ի վորոշումը, բարեհաճեցեք միայն կատարել այն։ Ահա պահանջները, վոր դնում է կուսակցությունն իր յուրաքանչյուր անդամի, յուրաքանչյուր բոլշևիկի առաջ։ Կուսակցությունն այս կամ այն վորոշումներն է դուրս բերում տնտեսական հարցերի նկատմամբ, բայց կուսակցության վոչ բոլոր անդամներն ու թեկնածուները պարտադիր են համարում կատարելու այդ վորոշումները։ Այլապես չեր կարողանալ այն դրությունը, վորը մենք ունենք «Կարմիր Աքսայում» տրակտորների նորոգության գործում, այլապես մենք չեյինք ունենալ «Աքսայի» գործիքներ պատրաստող ցեխում այլանդակդրությունը, Սելմաշում՝ ճեղքվածքը, այնպիսի ամենաայլանչակ դրությունը, յերբ պահածոյի «Սմիչկա» ֆաբրիկան ապակու կտորտանքներով կոնսերվներ է հրամցնում։ Դուք գիտեք, վոր սննդա-

յին արդյունաբերության սանիտարական կացության մասին կուսակցության Կենտկոմի հատուկ վորոշումը կա։ Ցավ մենք զտման ժամանակ «Սմիչկա» գործարանի կուսկազմակերպության անդամներից պատասխան կպահանջենք, թե ինչպես են իրագործել նրանք Կենտկոմի վորոշումը այդ հարցի մասին, ու ինչու են նրանք «Ռքսայի» վզին փաթաթում 12 հազար տուփ անպետք, զզվելի և կյանքի համար նույնիսկ վտանգավոր կոնսերվները և ինչու Յերկրային ժատակարարման բաժինը սպառնալիքով արձանագրում է նրանց ազգանունները, վորոնք հրաժարվում են բանվորների ժատակարարման համար այդպիսի կոնսերվներ ընդունելուց։ Մենք այդ էլ կատուգենք։ Կուսակցությունը վոչ վոքի թույլ չի տալիս անպետք ապրանքներ ծախել բանվորներին, կուսակցությունը թույլ չի տալիս ծաղրանքի յենթարկել սպառողներին։ Կենտկոմի տնտեսական հարցերի մասին ընդունած վորոշումները չկատարելը կուսակցական կարգապահության խախտում է։

Քաղաքացիական պատերազմի ժամանակ կդանվեր արդյոք մեկը, վոր համարձակվեր վիճաբանության յենթարկել կուսակցության Կենտկոմի վորոշումը։ Դուք յերևակայում եք, թե ինչ կլիներ, յեթե քաղաքացիական պատերազմի ժամանակ, պատերազմական գործողությունների ժամանակ մենք թույլ ված լինեյինք այդպիսի վիճաբանություններ։ Արդյունքն այն կլիներ, վոր մեզ կջարդեյին։ Այն ժամանակ մեր կուսակցությունն ուներ յերկաթե կարգապահություն և ով վոր ընդդիմանում եր այդ կարգապահության և խախտում այն, մեր կուսակցության շարքերից միշտ դուրս եր մնում։ Այդպիսին վոչ թե մեզ հետ, այլ մեր դասակարգային թշնամիների հետ եր։

Մեր կուսակցության XVII համագումարն անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման ամենահսկայական խնդիրներն է առաջադրել մեզ։ Յավնա, ով վոր չի ուզում կատարել այդ խնդիրները, նա խախտում է կուսակցական կարգապահությունը, նա չի կարող մեր կուսակցության անդամը լինել։ Պլանի իրական լինելու մասին վիճաբանությունն անթույլատրելի յե։ Մենք պահանջում ենք և պիտի պահանջենք կուսակցության յուրաքանչյուր անդամից և թեկնածուից, իսկ առաջիկայում նաև համակրողներից, վորպեսզի վոչ միայն իրենք կատարեն կուսակցության վորոշումները, այլև մոբիլիզացիայի յենթարկեն անկուսակցական ակտիվը անկուսակցական մասսաները մեր կուսակցության վորոշումների լավագույն կատարման համար։

Համկոմկուսի (բ) Կենտկոմը զտման մասին ընդունած իր վորոշմամբ պահանջում է կուսակցու-

թյան շարքերից հեռացնել «կուսակցության յեվ պետության յերկարն կարգապահությունը ամբարա յեվ գաղտնի խախտողներին, կուսակցության յեվ կառավարության վորոշումները չկատարողներին, կուսակցության վորոշումներն ու սահմանած պլանները կասկածի յենթարկողներին յեվ վարկաբեկողներին, վորոնք շաղակրատում են նրանց «անոռալության» յեվ «անիրագործելիության» մասին»:

Ահա, ընկերներ, ինչպես ե վարվելու կուսակցության ղեկան հանձնաժողովը նրանց հետ, ովքեր չեն կատարում կուսակցության և կառավարության վորոշումները, այլ զբաղվում են վիճաբանություն մղել պլանի իրագործելի և անիրագործելի լինելու մասին:

Մեր կուսակցության կազմակերպության մեջ կան բազմաթիվ որինակներ, յերբ կուսակցության անդամները պարտական չեն համարում իրենց կատարել կուսակցության վորոշումները:

Վերցնենք թեկուզ Ազով-Սևծովյան յերկրամասի կուսկազմակերպություններից մի քանիսի վարմունքը ցանքսի հենց առաջին որերին: Յեվ կուսակցության Կենտրոնական Կոմիտեն, և՛ Յերկրկոմը մի շարք վորոշումներ և ցուցմունքներ են տվել ցանքսի նախապատրաստման և ժամկետների մասին: Այնինչ, կուսակցության Նովո-Պոկրովսկի ռայկոմի քարտուղար, կուսակցության նախկին

անդամ Վարֆոլոմեյեվը, ցանքսը կազմակերպելու փոխարեն, քեֆ ե սարքում իր տանը, ապա հարբած նստում ե մեքենան ու իր բնակարանից մի քանի քայլ հեռու խրվում ե ցեխի մեջ, իսկ կոլխոզնիկները ցեխից քաշում—հանում են մեքենան ու նրան: Յեվ սա ռայկոմի քարտուղար ե: Մթթե կարելի յեր այլ կերպ վարվել նրա հետ, քան յեթե հեռացնել նրան կուսակցությունից: Հենց այդպես ել վարվեց կուսակցության ՎՀ Լիազորին առընթեր կուսգոլեգիան: Արդեն յերրորդ անգամն եր, վոր Վարֆոլոմեյեվը ռայկոմի քարտուղար եր ընտրվում: Յերկրկոմից նա ստացել եր խիստ հանդիմանություն և նախազգուշացում, նա այնքան «հանդիմանակեր» ե յեղել, վոր հանդիմանությունները նրա համար սովորական յերևույթներ են, և հավանորեն, հանդիմանությունների կարոտն եր քաշում՝ յերբ չեր ստանում:

Կուդրյավցեվ: Նա կազմալուծեց ռայոնական ամբողջ ղեկավարությունը:

Շտդուցց: Ընկեր Կուդրյավցևն ասում ե, վոր նա կազմալուծել ե ռայոնական ամբողջ ղեկավարությունը: Մենք դրա համար հեռացրինք կուսակցությունից, վորպեսզի մնացյալները հասկանան, վոր մենք ամենաանխնա պայքար ենք մղելու նրանց դեմ, վորոնք կհամարձակվեն խախտել կուսակցական կարգապահությունը:

V. ՉՏԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՍԵՐՎԱԾՆԵՐԻՑ, ՄՈՐԹԵՊԱՇՏՆԵՐԻՑ, ԿԱՐՅԵՐԻՍՏՆԵՐԻՑ, ԲՅՈՒՐՈԿՐԱՏՆԵՐԻՑ

Բացի Հակոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումների այս յերեք կետերից, վորոնց հիման վրա հեռացվում են կուսակցական շարքերից, ԿԿ-ը մատնանշում է նաև հետևյալը. կուսակցությունից հեռացվում են «վերասերվածները, վորոնք համանել են բուրժուական տարրերի նես, չեն ուզում գործով պայքարել դասակարգային բշնամիների դեմ, իրոք չեն պայքարում կուլակային տարրերի դեմ, կարգողների, դատարկապորտների, գողերի յեվ հասարակական սեփականությունը հափշտակողների դեմ. կարյերիստներ, մորթեպաշտներ, յեվ բյուրոկրատացած տարրերը, վորոնք կուսակցության անդամ յեվ խորհրդային պետության ծառայող լինելն ոգտագործում են իրենց անձնական մորթեպաշտական նպատակների համար, կտրված են մասսաներից յեվ բանվորներ ու գյուղացիների կարիքներն ու պահանջները չեն արհամարհում. բարոյապես կազմալուծվածները, վորոնք իրենց անվայել վարքով ձգում են կուսակցության արժանապատվությունը, կեղտոտում են կուսակցության դրոշը»:

Կան արդյոք այսպիսիները մեր կուսակցական կազմակերպության մեջ: Կարծում եմ, վոր վոչ-

վոք այս մասին կասկած չունի: Ահա ձեզ Սիչեվը, կուսակցության նախկին անդամ 1925 թվից, Ռոստովի կուսկազմակերպությունից, ինքը բատրակ, յեղել է Կարմիր բանակում, աշխատել է իբրև ՈՒՎ-ի հյուսիս. կովկասյան բաժնի կառավարիչ:

Հացամթերման մոբիլիզացիայից խուսափելու համար, նա, առանց Յերկրկոմի գիտության, հրաման է արձակում իր արձակուրդ գնալու մասին, թեև փաստորեն շարունակում էր աշխատել բաժնում: Յերբ Յերկրկոմից զանգահարում են այդ Սիչեվին, հիմնարկությունը նրա հրամանով հաղորդում է, թե Սիչեվը չկա, գնացել է արձակուրդ: Վերջապես յերբ նա կանչվեց Յերկրկոմ, ռայոն ուղևորվելուց հրաժարվեց՝ պատճառաբանելով, թե ինքն արձակուրդի մեջ է և թե՝ «ինձ կարող եյիք ավելի ռացիոնալ ձևով ոգտագործել, քան թե գյուղ ուղարկելն է»: Ի՞նչ անուն կարելի յե տալ նրան, յեթե վոչ կարյերիստ: Ի՞նչ անուն կարելի յե տալ կուսակցության այն անդամին, վորը փոխանակ վորպես կուսակցության և հեղափոխության ռազմիկ զինվոր, անմիջապես Յերկրկոմի վորոշումը կատարելու, «արձակում է» իրեն արձակուրդ գնալու և «ցուցմունք» է տալիս այն մասին, վոր ավելի ռացիոնալ կերպով կարող եյին ոգտագործել իրեն:

Ընկերներից վոմանք թերագնահատում են նման բնույթի արարքները։

Վերցրեք գործալքումները։ Գործալքում են նաև կոմունիստները։ Ի՞նչ բան է գործալքումը։ Գործալքումը փաստորեն արտադրական պլանի տապալումն է։ Իսկ ի՞նչ է նշանակում արտադրական պլանի տապալումը։ Դա նշանակում է ուսակցության և կառավարության վորոշումներն անկատար թողնել։ Իսկ ո՞վ է կազմակերպում այդ տապալումը։ Դա կազմակերպում է դասասակարգային թշնամին։

Կամ, ընկերներ, սոցիալիստական սեփականության հափշտակումը։ Հայտնի յե, վոր կոլխոզները կազմալուծելու նպատակով կոլխոզ խցկված կուլակը փչում, հափշտակում է կոլխոզի սեփականությունը։ Վատնումները կոլխոզում մեծ ծավալ են ստանում, թալանում են կոլխոզի ամբարները, կոոպերատիվ խանութները, ժորթում են անասունը, հափշտակում են սերմացուն։ Սոցիալիստական սեփականության հափշտակման փաստեր կան նաև ձեռնարկություններում։ Մասնավորապես, Տագանրոգի և Ռոստովի ձեռնարկություններում։ Ըստ վորում մեր յերկու ձեռնարկություններում այդ հափշտակումը կազմակերպված եր կուսակցության անդամների և թեկնածուների ձեռքով, նախկին սպիտակ գվարդիականների ղեկավարությամբ։ Հիշյալ յերկու ձեռնարկությունների գույքը հափշտակելու գործին մասնակցել են 10-ից ավելի կոմունիստներ, ըստ վորում հափշտակումը այնքան նրբին եր կազմակերպված, վոր հափշտակված ապրանքը դուրս հանելու միջոցին դիտավորյալ կանխամտածությամբ հանդցվում եր ձեռնարկության լուսավորությունը։ Կամ թե կողողության, կազմալուծման, ծեծի փաստերը։ Այս բոլորը դասակարգային թշնամու գործն է, կուսակցության անդամների դասակարգային զգոնության բացակայության պայմաններում։

«Նեպմանական վոգին» դեռ շարունակում է մնալ մեր կուսակցության անդամների մի քանիսի մոտ։ Մոտ անցյալում մեր կուսակցության կենտրոնական որգան «Պրավդա»-յում կար մի հոդված սպեկուլյացիայի մասին Ռոստով քաղաքում։ Այս հոդվածում «Պրավդա»-ն մերկացնում եր Ռոստովի սպառկոոպերացիայի ղեկավարներին, № 3 կոոպխոզի դիրեկտոր Պուշին, ժողովրդական սննդի տրեստի ղեկավարներին։ Հիշյալ ընկերները, գիտակ լինելով խորհրդային որենքներին, թույլ եյին տվել իրենց լայն սպառման ապրանքների գներն ավելացնել, ապրանքները ծախում եյին շուկայի գներով, կազմալուծում եյին խորհրդային շուկան և կոլխոզային առևտուրը։ Փոխանակ

կոլխոզ գնալու և այնտեղ գնումներ անելու, փոխանակ հանդիպական ապրանքների վաճառումը կազմակերպելով աղդել կոլխոզային շուկայի վրա գների իջեցման ուղղությամբ, այս կազմակերպիչները գներն էլ բարձրացնում կոլխոզային շուկայում, տապալում էլ բանվորների մատակարարումը կոլխոզնիկների այն մթերքներով, որոնք կոլխոզային շուկան էլ բերվում։ Այս գործում մեղքի մի մասն էլ ընկնում է քաղկոմի բյուրոյի անդամներ՝ ընկ. Սոկոլովի, Վորոբյեվի, Վոլբերգի վրա։

Մի՞թե Շախտի կոոպերատորները դասակարգային թշնամու ազդեցությունից ազատ են, յերբ նրանք կաթի գների վրադիրն են կիրառում, բացը ծածկելու, վնասները ծածկելու առարկությամբ։ Վարչական-տնտեսական ծախսերի կրճատման մասին, ինչպես նաև հաստիքների կրճատման ու միջոցների տնտեսման մասին կուսակցության վորոշումներն իրագործելու փոխարեն, այս մարդիկ, վարակված լինելով «նեպմանական վոգով», դասակարգային թշնամու թելադրությամբ հակակուսակցական գործ են անում։ Զտման հանձնաժողովը չի կարող նման փաստերի կողքով անցնել։

Մեր կուսակցությունը զտման ժամանակ պետք է ազատվի բյուրոկրատներից և կարյերիստներից, վորոնց թիվը մեզնում քիչ չէ։ Վերցնենք, որինակի համար, կուսակցության այնպիսի անդամի, վորպիսին Գանդյուկն է — Նովոչերկասկի ռայոնական ՎՀ-ի կուսկոլեգիայի նախկին քարտուղար։ Ինքը՝ Գանդյուկը պատասխանատվության ենթարկում կուսակցության անդամներին՝ կուսակցական դիրեկտիվները չկատարելու համար։ Իսկ յերբ նրան մոբիլիզացիայի յենթարկեցին և ուղեցին կոլխոզի բջիջի քարտուղարի պաշտոնով գյուղ ուղարկել, նա հրաժարվեց ու հայտարարեց՝ գիտե՞ք ինչ, թե՝ «Մասշտաբը նրա համար փոքր է» (ծիծաղ)։ Միայն բյուրոկրատը, կարյերիստը կարող է հրաժարվել կոլխոզի բջիջում աշխատելուց։ Այն ժամանակ, յերբ կուսակցությունը գյուղ էր ուղարկում իր լավագույն անդամներին, յերբ Ռոստովի կուսկազմակերպությունը 10 հազարից ավելի կուսանդամներ է ուղարկել գյուղ, յերբ կուլակին հաջողվեց գյուղում կազմակերպել սաբոտաժ և դիմադրություն կուսակցության անցկացրած միջոցառումների հանդեպ, — այս Գանդյուկի համար կոլխոզի բջիջը մասշտաբով փոքր դուրս յեկավ։ Այսպիսի բյուրոկրատներին, կարյերիստներին մենք պետք է դուրս վռնտենք զտման ժամանակ։

VI. ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կուսակցության զտումը պետք է անցկենա կուսակցության անդամների, կոմյերիտականների, պրոֆմիութենական կազմակերպությունների, բոլոր բանվորական և կոլխոզային մասսաների բացառիկ ակտիվությամբ։ Անցած զտման փորձը ցույց է տալիս, որ աղտոտված բջիջներում զտման հանձնաժողովի աշխատանքի դեմ յերբեմն սաբոտաժ է կազմակերպվում։ Ահա, որինակ. Արմավիր-II քարշի ծառայողների զտման ժամանակ կոմունիստների և անկուսակցականների ընդհանուր լռություն եր տիրում։ Յերբ հանձնաժողովի նախագահը հարցրեց լռության պատճառների մասին, դուրս յեկավ կուսկոլեկտիվի քարտուղար ընկ. Անտիպովը և հայտարարեց, թե կուսակցության անդամների և անկուսակցականների լռության պատճառն այն է, որ հանձնաժողովը առաջադրել է արտադրական ընույթ կրող խիստ պահանջներ, և բանվորները լուռ են նրա համար, որ հանձնաժողովը «ժանդարմի» պես է պահում իրեն (ծիծաղ)։ Կուսկոլեկտիվի քարտուղարի այսպիսի յելույթից հետո, 20-ից ավելի ընկերներ յելույթ ունեցան ու պահանջեցին հանել նրան աշխատանքից։

Դժվար. չե հասկանալ, որ այս բջիջը շատ եր աղտոտված։ Պարզվեց, որ այս բջիջի յերկու կուսակցական անդամներ ծառայած են յեղել Ալեքսեևի սպիտակ գվարդիական գընդում, մեկը վոստիկան է յեղած, մյուսը ծառայել է հակահետախուզական բաժնում և մեկն ել ժանդարմ է յեղած։ Ահա ձեզ մի փնջիկ։ Յեվ բնական է, որ այս մարդիկ, կանգնած լինելով կուսկազմակերպության գլուխը, չեյին կարող թույլ տալ, որ յերևան գա կուսակցականների և անկուսակցական մասսաների ակտիվությունը։ Սրանով պետք է բացատրել այն լռությունը, որ տեղի ունեցավ Արմավիր-II-ում, զտման ժամանակ։ Կրկնում եմ, որ միայն ամբողջ բանվորական և կոլխոզական մասսաների ակտիվությամբ, լայն ինքնաքննադատությամբ հարկավոր է և կարելի յե տանել կուսակցական շարքերի զտման աշխատանքը։

Դուք գիտեք, որ ամենապատասխանատու խնդիրն ընկնում է այն ընկերների վրա, որոնք կատարում են զտումը, գործ ունեն կենդանի մարդկանց հետ։ Հանձնաժողովի անդամներից, նրա նախագահից պահանջվում է բացառիկ համբերություն, բացառիկ ուշադրություն, բացառիկ փափկանկատություն այն ամենքի վերաբերմամբ, որոնք զտման են յենթարկվում։ Դրա հետ միասին, հանձ-

նաժողովի անդամները պարտավոր են համապատասխան պայմաններ ստեղծել նրանց համար, վորոնք զտման են յենթարկվում։ Չպետք է այնպես անել, վոր կուսակցության անդամները քննության յենթարկած զդան իրենց։ Չէ՞ վոր մենք ձեզ հետ դպրոցականներ չենք, հետևաբար և քննության պայմաններ չպետք է ստեղծել։ Զտման ժամանակ պետք է ընկերական շրջապատ ստեղծել, կուսակցական ժողովի, կուսակցության առանձին անդամների ու թեկնածուների, ինչպես և ժողովում մասնակցող անկուսակցականների հայտարարությունների հանդեպ անուշադիր վերաբերմունք ցույց չտալ։

Մեր կուսակցության զտումը պետք է աջակցի կուսկազմակերպության անդամների գիտելիքների մակարդակի բարձրացմանը։ Կարծում եմ, վոր ձեր մեջ կան այնպիսիները, վորոնք քաղաքական զրագիտության մեջ ավելի թույլ են՝ քան թե մի քանի անկուսակցական բանվորներ։ Յերբեմն անկուսակցական բանվորն ավելի զրագետ է, քան թե մեր կուսակցականները։ Դա անթույլատրելի յե։ Չէ՞ վոր մեր կուսակցությունը բանվոր դասակարգի առաջապահն է։ Կոմունիստը ձեռնարկության առաջավոր բանվորն է։ Անկարելի է թույլատրել, վորպեսզի անկուսակցականները չկարողանան ստանալ նրանից բավականաչափ բացատրություն և լուսաբանություն՝ կուսակցության ընթացիկ քաղաքականության բոլոր հարցերի մասին։ Կուսակցության անդամները պարտավոր են իմանալու կուսակցության և՛ ծրագիրը և՛ կանոնադրությունը։ Նրանք պետք է ունենան քաղաքական զրագիտության մինիմումը և պետք է տեղյակ լինեն կուսակցության քաղաքականության։ Կուսակցության անդամները պետք է իմանան կուսակցության XVII համագումարի վորոշումները և գործով ցույց տան, թե ինչպես են անցկացնում այս վորոշումներն իրենց ձեռնարկության մեջ, գաղդյահի մոտ։ Դա նվազագույն պահանջն է, վոր մենք առաջադրելու յենք կուսակցության անդամին։ Չի կարելի թույլ տալ այնպիսի դրություն, վորպեսզի կուսակցության անդամները լրագիր չկարդան և տեղյակ չլինեն քաղաքական անցուդարձերին։ Պետք է պահանջել, վորպեսզի կոմունիստները թեորետիկ գիտելիքների մինիմումն ունենան։

Դա չի նշանակում, վոր մենք կուսակցության յուրաքանչյուր անդամից պիտի պահանջենք, վոր նա իմանա Մարքսի «Կապիտալը» կամ նրա այլ յերկերը։ Յերբեմն չարանից «խիղախները» այնպիսի հարցեր են տալիս, վոր իրենք էլ լավ չգիտեն։ Վոմանք էլ «ենենդամիտ» հարցեր են տալիս։ Նման տեսակի հարցեր տալը կատեգորիկ

կերպով արգելվում է։ Լինում են դեպքեր, յերբ կուսակցության շատ լավ անդամը, վորը քիչ-շատ պատրաստված է, զտման ժամանակ ինքն իրեն կորցնում է հենց նրա համար, վոր համապատասխան շրջապատ չի ստեղծված։ Հաշվի պետք է առնել նաև այս հանգամանքը։ Սա մի շատ դժվար խնդիր է նրանց համար, վորոնք զտման գործումն են աշխատելու։ Բայց և այնպես անուշադիր չպետք է թողնել այս տեսակ փաստերը։ Այստեղ պահանջվում է դիֆերենցված մոտեցում կուսակցության յուրաքանչյուր անդամին, յուրաքանչյուր թեկնածուին։ Յերբ զտելու լինենք Ռոստովի մարքսիզմի կուրսերի ունկնդիրներին, մենք չենք կարող հրաժարվել թեորետիկ հարցերից, վորովհետև ունկնդրի պատասխանը վորոշելու յե նրա պրոդուկցիայի վորակը։ Այստեղ մենք կհարցնենք և՝ «իմպերիալիզմի» և այլ բաների մասին, բայց նույնը «Աքսայում» անթույլատրելի յե։ Կարող է լինել և՝ այսպիսիդրություն, յերբ կուսակցության անդամը, վոր մասնակցել է քաղաքացիական պատերազմին, թեորետիկ գիտելիքներից թույլ լինի։ Այժմ, յերբ մենք լուծում ենք անդասակարգ հասարակություն կառուցելու վեհագույն խնդիրները, կուսակցության անդամից մենք պետք է պահանջենք իր գիտելիքների մակարդակը բարձրացնել և, յեթե դուրս գա, վոր

նա վատ է պատրաստված, ապա նա կարող է կուսակցության անդամից փոխադրվել թեկնածուների շարքը, իսկ թեկնածությունից — համակրողների խումբը։ Յեվ այս վոչ թե պատժելու, այլ կուսակցության անդամին անհրաժեշտ գիտելիքներով զինելու նպատակով։ Յեթե մի տարուց հետո համակրողների խումբը փոխադրվածը պատրաստություն ձեռք բերած լինի, նա կարող է փոխադրվել վորպես թեկնածու կամ ուղղակի վորպես կուսակցության անդամ

* * *

Ահա, ընկեր՛ եր, հիմնականում այն հարցերը, վորոնք պիտի դրվեն զտման ժամանակ Ռոստովի կուսակցության կազմակերպության առաջ, վորը յերկրամասի խոշորագույն կազմակերպությունն է։

Պետք է ասել, վոր յեռամյակի առաջին յերկու ամիսներում արդյունաբերական արտադրության բնագավառում Ռոստով քաղաքի ցուցանիշները լավերից չեն, անբավարար են։ Այդ ցույց է տալիս, վոր կուսակցական ուխտատանքը թուլացել է, այդ ցույց է տալիս, վոր մեր ընկերները դեռ բավականաչափ մոբիլիզացիայի չեն յենթարկել իրենց՝ կուսակցության XVII համագումարի վորոշումները կատարելու համար։ Յեթե Ռոստովի արդյունաբերությունը պլանը չի կատարել, դա

նշանակում է, որ Ռոստովի կուսկազմակերպության աշխատանքը գոհացուցիչ չէ։

Ռոստովի կուսկազմակերպությունը պետք է ոգտագործի մնացած ժամանակամիջոցը մասսաների վերելքի համար՝ արտադրական պլանները կատարելու նպատակով։ Ռոստովի կուսակցական կազմակերպությունը չունի վոչ մի հիմք և իրավունք ճեղքվածքով ներկայանալ զտմանը։ Իբրև յերկրամասի խոշոր պրոլետարական կազմակերպություն, Ռոստովի կուսկազմակերպությունը պարտական պիտի լինի ոգնել զտման հանձնաժողովին՝ մյուս քաղաքների ու գյուղերի կուսկազմակերպությունները ևս զտելու։ Ռոստովի կուսակցական կազմակերպությունից մենք պահանջում ենք 414 կոփված բոլշևիկներ, վորոնք կարողանան զտել թե Ռոստովի կազմակերպությունը և թե ռայոնի ու գյուղերի կազմակերպությունները։ Դա նշանակում է, որ Ռոստովի կուսկազմակերպությունը պետք է զատի կուսակցության 414 անդամ 7—10 տարվա ստաժով։ Լավագույններից լավագույններին — ահա վորոնց պետք է զատի Ռոստովի կուսկազմակերպությունը իբրև ոգնություն Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպության զտման գործին։ Լավագույններից լավագույնները միայն կարող են զտել մյուսներին։

1934 թվի զտումը պետք է անցնի բոլորովին տարբեր պայմաններում, քան անցյալ տարիներինը։ 1932—33 թ. Ազով-Սեվծովյան յերկրամասում մենք ունեցինք կուլակային սաբոտաժ, ժանավանդ Կուբանում։ Նույնը չենք կարող ասել ներկայիս մասին։ Սակայն անվիճելի յե, որ սաբոտաժային տարրեր կան և առանձին կոլխոզներում, որ մինչև այժմ էլ դեռ գոյություն ունի դասակարգային թշնամու դիմադրությունը։ Դա շատ է փոխում մեր կուսակցության աշխատանքի պայմանները։ Բայց կրկնում եմ, որ դա չի նշանակում, թե դասակարգային պայքարը թուլացել է գյուղում։ Բոլորովին վոչ։ Դասակարգային պայքարը կա և այժմ։ Դասակարգային թշնամու դիմադրությունը շատ մեծ է, դա ավելի ևս պարտավորեցնում է մեզ բարձրացնել դասակարգային զգոնությունը, զատել կուսակցության լավագույն անպամներին՝ գյուղի կուսակցական շրջքերը զտելու համար, ծավալել սոցիալիստական մրցակցությունը և հարվածայնությունը՝ հաղթանակով ներկայանալու համար զտմանը։

Պետք է խնդիր դնել մեր առաջ ներկայանալ զտմանը՝ արտադրական պլանը կատարած։ Ահա մի խնդիր, որը Ռոստովի կուսակցական կազմակերպությունը պետք է առաջադրի իրեն։ Գյուղական կուսկազմակերպությունները պետք է

խնդիր առաջադրեն իրենց՝ մաքսիմալ չափով կրճատել ցանքսի ժամկետները, բարձրացնել ցանքսի վորակը։ Կուսակցության յուրաքանչյուր անդամի խնդիրն է — մինչև զուտը կատարել յեվ գերակատարել վոչ միայն իր նորմերն, այլ յեվ իր բրիգադի, իր ցեխի պլանը։

Կասկած չկա, վոր Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպությունը, վորն անցյալում վոչ սակավ հաղթանակներ է ունեցել յեվ Լենինի սեծ կուսակցության մի մասն է հանդիսանում, կուսակցությունն, վորը ղեկավարվում է բանվոր դասակարգի վողջ հերոսականը մարմնացնող՝ ժամանակիս մեծագույն մարդու, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի կողմից—զտմանը կենդանի նոր հաղթանակներով։ (Ծափահարություններ)։

ՀԱՅԿ - СССР
Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0187007

ԳԻՆԸ Цена 12 ԿՈՊ. Коп.

15912—

С. К. ШАДУНЦ

ЗАДАЧИ ЧИСТКИ АЗОВО-ЧЕРНОМОРСКОЙ ПАРТИЙНОЙ ОРГАНИЗАЦИИ

На армянском языке

СКЛАД ИЗДАНИЯ
Ростов на Дону
Ул. Ф. Энгельса, 90
ПАРТИЗДАТ